

ՀԻՓՄՈՒՆԴ ՖՐՈՅԴԻ ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՖԻԼԻՊ ՌՈԹԻ ՎԵՊԵՐՈՒՄ

ՀՏԴ 82.091
DOI 10.56246/18294480-2022.12-26

ԱԴԱՄՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի
արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
էլփոստ՝ lusine.adamyam@ysu.am

Սույն հոդվածում քննվում է Զ. Ֆրոյդի գիտական հայացքների ազդեցությունը ժամանակակից ամերիկացի հրեա գրող Ֆիլիպ Ռոթի ստեղծագործությունների վրա: Կիրառելով գրականագիտության կենսագրական, մշակութային-պատմական, համեմատական և հոգեբանական մեթոդները՝ հոդվածագիրը ցույց է տալիս՝ ինչպես է Ռոթն իր ստեղծագործություններում օգտագործում Ֆրոյդի տեսությունները, ստեղծում դրանցից հեղինակային-գրողական «գործիքներ»: Գրողը հենվում է հոգեվերլուծության տեսության որոշակի դրույթների վրա իր ստեղծագործությունները կառուցելիս, օգտագործում դրանք որպես իր գրքերի հերոսների կյանքում որոշակի երևույթների այլաբանություն. 1. Էդիպյան և Էլեկտրայի բարդույթները դիտարկվում են որպես այլաբանություն հրեա ծնողների՝ իրենց երեխաների կյանքում չափազանց մեծ ներկայության, կենսական ասպարեզ ներխուժելուն, ինչը համեմատվում է ֆիզիկական կապի հետ, 2. Գերես-ի և Իդ-ի տեսությունը ներկայացվում է որպես գրական հերոսների մոտ հիվանդագին ուժեղ լիբիդո՝ որպես հիպերկոմպենսացիա չափազանց խիստ դաստիարակության: Գերես-ը ծնողների խիստ դաստիարակությունն է, Իդ-ը՝ բողոքն այդ դաստիարակության դեմ: Այս երկու կողմերը դրսևորվում են մեկ հերոսի հոգեբանության մեջ, որի պատճառով նա սկսում է «երկակի» կյանք վարել: Սա մեկ անձի մեջ ստեղծում է երկու տարբեր կողմեր, որոնք արևմտյան գրականագետներից մեկը՝ Զ. Բերտենզը, անվանել է Սահմանափակ էություն (Գերես) և Անսահման էություն (Իդ): Նշվում է նաև, որ Ֆ. Ռոթը հոգեվերլուծության տեսությանը դիմում է ստեղծագործությունների ոչ միայն թեմատիկ, այլև կառուցվածքային հարցերում. նրա որոշ գործեր գրված են հոգեթերա-

պիայի սեանսի ստենոգրաֆիայի ձևով, օրինակ՝ «Խաբեությունը», «Պորպոնյի բողոքը», իսկ որոշ գործերում էլ նկատվում է նմանություն «գիտակցության հոսքի» հետ, օրինակ՝ «Վրդովմունք» վեպում:

Քանալի բառեր՝ 2. Ֆրոյդ, Ֆ. Ռոթ, հոգեվերլուծության տեսություն, հոգեթերապիա, հեգնանք, Գերես, Իդ, գիտակցություն, ենթագիտակցություն, էդիպյան բարդույթ, Էլեկտրայի բարդույթ:

Մարդկության պատմության ողջ ընթացքում քիչ գաղափարներ են ունեցել այնպիսի լայն և ուժեղ ազդեցություն, ինչպիսիք հրեական ծագումով ավստրիացի հոգեբան, հոգեբույժ, հոգեվերլուծության հիմնադիր Զիգմունդ Շլոմո Ֆրոյդի (1856-1939թթ.) աշխատություններում արծարծվածներն են: Ֆրոյդի գաղափարները, վիճահարույց լինելով հանդերձ, փոխել են մի ամբողջ սերնդի մտածելակերպ, իրենց անջնջելի հետքը թողել նաև արվեստի և գրականության վրա: Ինքը՝ Ֆրոյդը, իր «Հոգեվերլուծության ներածություն» աշխատության մեջ նշում է. «Իր պատմության ընթացքում մարդկությունը երկու ցավալի հարված է ստացել իր ինքնասիրությանը: Առաջինը հասցրեց Կոպեռնիկոսը տասնվեցերորդ դարում՝ մարդկանց մոլորակը տիեզերքի կենտրոնից տեղափոխելով դեպի ծայրամաս, երկրորդը հասցրեց Դարվինը տասնիններորդ դարակեսին՝ ստիպելով մարդկանց ընդունել իրենց ազգակցական կապը կենդանիների հետ»¹: Երրորդ հարվածը հասցրեց Ֆրոյդը՝ առաջինը խիզախելով, առանց նախապաշարմունքների և հասարակության կարծիքից կախվածություն ունենալու, խոսել այն մասին, որ մարդկության գիտակցությունն ու բանականությունն աննշան կերպով են ազդում նրա արարքների վրա. կյանքում մարդուն կառավարում են նրա ենթագիտակցությունն ու բնագղը:

Մեծ է Ֆրոյդի գաղափարների ազդեցությունը նաև գրականության վրա: Պատկերացումը, որ մարդը ոչ թե բանական, այլ ենթագիտակցական էակ է, որը կառավարվում է մութ և անհասկանալի ուժերի կողմից, մեկընդմիջտ փոխեց գրականությունը: Դևիդ Լոուրենսի, Վլադիմիր Նաբոկովի, Ջերոմ Սելինջերի, Ալբերտ Բամյուի, Ժան-Պոլ Սարտրի, Ուիլյամ Գոլդինգի, Ուիլյամ Ֆոլքների, Ջեյմս Զոյսի, Վիրջինիա Վուլֆի և այլոց ստեղծագործու-

¹ Freud S., A General Introduction to Psychoanalysis, «Wordsworth» Classics of World Literature, London, 2012, p. 125 (թարգմանությունն անգլերենից մերն է):

թյունները մեծապես կրում են ֆրոյդյան գաղափարների ազդեցությունը: Ֆրոյդյան փիլիսոփայության հիմքի վրա է կառուցվում գրական մոդեռնիզմը. դադաիստները, սյուրռեալիստները առաջնորդվում են այն գաղափարով, որ մարդուն կառավարում է ենթագիտակցությունը. պետք չէ մտածել. ենթագիտակցաբար կատարած որոշումը կհանգեցնի ցանկալի արդյունքի: Ըմբռնումը, որ մարդու ենթագիտակցությունը պարունակում է նրա մասին ամենաստույգ և ընդգրկուն տեղեկատվությունը (այն աղճատվում է, երբ մարդն ինքն է պատմում իր մասին, քանի որ պատմելիս, գիտակցաբար կամ ենթագիտակցաբար թաքցնում է մտքերը կամ որոշ փաստեր իր մասին), սկիզբ է դնում մոդեռնիստական գրականության ամենահատկանշական մեթոդներից մեկին՝ *գիտակցության հոսքին* (անգլ.՝ Stream of Consciousness): Այս մեթոդով գրված ստեղծագործություններում բացակայում են պատճառահետևանքային կապերը, ժամանակի և տարածության մասին ավանդական պատկերացումները. ենթագիտակցությունը չի ճանաչում դրանք: Կա միայն գրական հերոսների ներքին մենախոսություն, որը փոխանցվում է ընթերցողին առանց զտվելու ու գրաքննվելու:

Ֆրոյդյան ըմբռնումներից մեծապես ազդված հեղինակներից առանձնանում է ամերիկացի հրեա գրող Ֆիլիպ Միլթոն Ռոթը (1933-2018թթ.)՝ նորագույն շրջանի ամերիկյան գրականության ամենահինքնատիպ ու հաջողակ հեղինակներից մեկը, ով բազում գրական մրցանակների դափնեկիր էր (Պետական գրաքննադատական, «Պուլիցերյան», Ֆոլքների, Սոուլ Բելոյի, Նաբոկովի անվան և այլն) և դասական հեղինակների շարքն էր դասվել դեռևս իր կենդանության օրոք: Նրա ստեղծագործության առանցքում հրեայի հոգեբանությունն է, հատկապես ներգաղթյալ հրեայի, ով անվերջ գտնվում է սեփական ազգային ինքնորոշման փնտրտուքի մեջ. այս թեման կարմիր թելի նման անցնում է Ռոթի ամբողջ գրական ժառանգության միջով, բացի դրանից՝ նրա գրեթե բոլոր գործերի գլխավոր հերոսները հրեաներ են (բացառություն է միայն «Նա այնքան լավ աղջիկ էր» (1967թ.) վեպը): Ռոթը՝ որպես գրող, ազդվել է հիմնականում հրեա այլ հեղինակներից, որոնց մեջ նա մշտապես առանձնացրել է Սոուլ Բելոյին և Ֆրանց Կաֆկային: Նրա գրական դիմագծի ձևավորման վրա անժխտելի է նաև Զիգմունդ Ֆրոյդի գաղափարախոսության, հոգեբանական տեսությունների ազդեցությունը, որը ստեղծագործություններում արտահայտվել է թե՛ կառուցվածաբարանական, թե՛ թեմատիկ առումներով:



Ֆիլիպ Ռոթի վերաբերմունքը Ջիզմունդ Ֆրոյդի գաղափարախոսությանն ու հոգեթերապիային: Ֆիլիպ Ռոթը՝ գրող, ում ամենասիրած գրական արտահայտչամիջոցը հեգնանքն է, հեգնանքով է վերաբերվել նաև ֆրոյդյան տեսությանը: Նա ոչ թե ընթացել է ֆրոյդի տեսության նշած գաղափարական ուղիով, այլ օգտագործել է նրա գաղափարները որպես սեփական ստեղծագործությունների հիմք: Ռոթի ստեղծագործությունը սնվում է ֆրոյդյան հոգեթերապիայից և՛ կառուցվածքային («Պրոտնոյի բողոքը» և «Խաբեություն» վեպերը գրված են հոգեթերապիայի սեանսի ստենոգրաֆիայի տեսքով, շատ գործերում հերոսները դիմում են հոգեթերապևտի, և հեղինակը հատուկ ուշադրություն է հատկացնում այդ դրվագներին), և՛ թեմատիկ առումներով. իր վեպերում նա մշտապես հնչեցնում է էդիպյան և Էլեկտրայի բարդության, հիպերփոխհատուցման, Գերեսի և Իդի (գիտակցության և ենթագիտակցության) հակադրության, ստեղծագործության՝ որպես սեռական էներգիայի վատնման թեմաները: Բայց խոսելով նրա գրական ժառանգության այս առանձնահատկության մասին՝ պետք է արվի մեկ ճշտում՝ Ֆիլիպ Ռոթը թերահավատորեն է վերաբերվել ֆրոյդյան գաղափարախոսությանը և նրա հոգեթերապիայի «ուժին»: Լինելով իր բնույթով հեզոզ մարդ՝ նա իր ստեղծագործություններում օգտագործել է հեգնանքը որպես պայքարի միջոց այն երևույթների դեմ, որոնք, իր կարծիքով, բացասական են: Դրանից չեն խուսափել նաև հոգեթերապիան և հոգեթերապևտները: Ռոթը՝ որպես հոգեթերապևտի երբեմնի այցելու, մի առիթով ասել է. «Հոգեթերապիայի սեանսները ինձ շատ ավելի օգնել են գրքեր գրելու, քան նյարդայնությունս հաղթահարելու գործում»²: Այս վերաբերմունքը պարզորոշ երևում է նրա գրական գործերում. այն ամենը, ինչ վերաբերում է դրանց, պարուրված է հեգնանքի, երբեմն՝ աքսուրդի քողով, փոքրիկ ակնարկների միջոցով պարբերաբար ընդգծվում է այդ երևույթի միակողմանիությունն ու անկատարությունը: Օրինակ՝ «Շաբաթի թատրոնը» վեպի հերոսուհիներից մեկը՝ Մադելինը, գլխավոր հերոսի՝ Շաբաթի հետ մասնավոր զրույցում ասում է, որ հոր մահվանից հետո գնում էր հոգեթերապիայի սեանսների, որոնք օգնելու փոխարեն ավելի շուտ ինքնասպանություն գործելու մտքեր էին առաջացնում, որովհետև «Ամեն ինչի պատասխանը կա՛մ «Պրոգակն» է (հակադեպրեսանտ), կա՛մ ինցեստը... ձևական ինքնաճանաչողություն: Այդ

² *Conversations with Philip Roth*, ed. Charles J. G., Jackson: «University Press of Mississippi», 1992, p. 170 (թարգմանությունն անգլերենից մերն է)

թերապիան արդեն բավական է մարդուն սուիցիդալ տրամադրության մեջ գցելու համար»³: «Մարդկային խարան» վեպում տասնչորսամյա Ֆաունիին, ում հայրացուն սեռական բռնության է ենթարկել, տանում են հոգեթերապևտի մոտ, ով խորթ հոր կողմն է բռնում, քանի որ վճարողը նա էր: «Ամերիկյան հովվերգություն» վեպում Մերիին, ով սկսել էր կակազել, ծնողները տանում են հոգեթերապևտի մոտ միայն այն նպատակով, որ վերջինս ասի, թե կակազելը Մերիի կողմից գիտակցված որոշում է, այդպես նա ցանկանում է առանձնահատուկ լինել: Ծաղրական երանգ ունեն նաև վերոհիշյալ մասնագետների նկարագրությունները: «Պորտնոյի բողոքը» վեպում Մերի-Ջեյնի հոգեթերապևտը երբեք չի խոսում, միայն ինչ-ինչ ծայներ է արձակում՝ հագում, փռշտում, փնչացնում, հորանջում, գկռտում, խռռացնում և այլն: Մերի-Ջեյնի համար այդ ծայները կոդավորված տեղեկատվություն են. նա ըստ դրանց է հասկանում՝ ինչպես է ընթանում իր բուժումը: Նույն վեպի վերջում Ալեքսանդրի մոտ 400-էջանոց մենախոսությունից հետո նրա հոգեթերապևտը եզրափակում է գիրքը իր հայտնի «եզրափակիչ ակորդով». «Դե...երևի քարոզ ենք սքսել, հա՛»⁴. այստեղ հեղինակի հեգնանքը տարածվում է և՛ ձևի, և՛ բովանդակության վրա. ծաղրական է թերապևտի խոսվածքը, որից երևում է, որ նա անգլերենը վատ յուրացրած հրեա է. և փաստորեն, 400 էջ խոսելուց հետո Պորտնոյը չի էլ սկսել իր բուժումը: Հետաքրքրական օրինակ կա նաև «Տղամարդու իմ կյանքը» («My Life as a Man» 1974) վեպում: Գլխավոր հերոսը՝ Փիթերը, պատահաբար իր հոգեթերապևտի հոգվածում տեսնում է նրա այցելուներից մեկի խնդիրների նկարագրությունը, հասկանում, որ այդ այցելուն ինքն է: Այստեղ շոշափվում է հոգեթերապևտի՝ բժշկական էթիկայի նորմերը խախտելու խնդիրը: Ընդ որում որոշ գրականագետներ կարծում են, որ սա Ռոթի մոտ ունեցել է կենսագրական հիմքեր⁵: Հոգեթերապիայի մասնագետը հանրային քննարկման է դնում իր այցելուի ենթագիտակցությունը, երբ տրամաբանորեն հասկանալ էր պետք, որ ենթագիտակցական այդ մանրամասների բացահայտումը հիվանդի մոտ առաջացնում է բացահայտվելու-կաստրացիայի վախ:

³ Roth P., *Sabbath's Theater*, New York: «Vintage», 1996, p. 287 (թարգմանությունն անգլերենից մերն է)

⁴ Ռոթ Ֆ., Պորտնոյի Ցավը, Երևան, «Անտարես», 2018, էջ 282 (թարգմանությունն անգլերենից՝ Զավեն Բոյաջյանի)

⁵ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Berman J., *Revisiting Roth's Psychoanalysts*, // *The Cambridge Companion to Philip Roth* edited by Tomothy Parrish, Texas Christian University, «Cambridge University Press», 2007, p. 94-110

Ֆիլիպ Ռոթի գրական հերոսները հաճախ են դիմում հոգեթերապիայի «օգնությանը» ևս մեկ ակնհայտ պատճառով. Ռոթը հեգնում է ամերիկյան հասարակության մեջ այդ երևույթի սովորութայնությունը:

Ամփոփելով այս հատվածը՝ վերստին նշենք՝ Ռոթի ստեղծագործությունը մեծապես կրում է Ֆրոյդի տեսական գաղափարների ազդեցությունը, սակայն հեղինակը ոչ թե հետևում է դրանց, այլ օգտվում դրանցից:

«Անսահման» և «սահմանափակ» էություններով հերոսները Ֆիլիպ Ռոթի ստեղծագործություններում: Ռոթի ստեղծագործությունների բոլոր կենտրոնական կերպարներին բնորոշ ընդհանուր հատկանիշը *երկարվածությունն* է: Մեկ անձի մեջ երկու տարբեր էությունների համատեղումը հատուկ է նրանց մեծ մասին (Ալեքսանդր Պորտնոյ, Դևիդ Քեփեշ, Նաթան Յուքերման, Մերի Լևով, Քոուլման Սիլբ, Եվա Ֆրեյմ և այլք): Այս երկարավածությունն իր հերթին ունի երկու մակարդակ.

ա) Արտաքին սոցիալական. գրական կերպարները հիմնականում ներգաղթյալ հրեաներ են, որոնք ունեն իրենց ազգային կողմնորոշումը գտնելու խնդիր. ո՛չ ամբողջությամբ հրեա են, ո՛չ ամերիկացի: Կիսվելով երկու ազգությունների միջև՝ նրանք պիտի կորցնեն իրենց *անհատականությունը*: Այսինքն՝ նրանք ոչ միայն չեն պատկանում երկու ազգությունների, այլև չեն կրում դրանցից որևէ մեկի դիմագիծը: Այստեղից առաջանում է նրանց նյարդայնությունը, անվստահությունը, որը, ըստ Ռոթի, առանձնացնում է ներգաղթյալ հրեային բնիկ իսրայելցի հրեայից՝ *սաբրայից*, ինչպես նրանց անվանում են եբրայերեն: Հիշենք, օրինակ, «Պորտնոյի բողոքը» գրքի վերջին դրվագներից մեկում՝ նկարագրվող բնիկ իսրայելցի աղջկան՝ զինվորական Նաոմիին, որի ինքնավստահ ու հանգիստ բնավորությունը առաջին իսկ պահին առանձնացնում է նրան Ալեքսանդրից:

բ) Ներքին հոգեբանական. հրեաները հին հայրապետական, համայնքային ժողովուրդ են և ունեն բավականին խիստ սովորույթներ, պահվածքային, կենցաղային սահմանափակումներ, որոնք խորթ են ամերիկացիներին: Նրանք ստիպված են եղել հետևել մի շարք կանոնների և օրենքների, որոնք առկա չէին ամերիկացիների մոտ: Ներգաղթյալ հրեա երեխան, որը տանը ստանում է այդպիսի դաստիարակություն, աչքի առաջ ունի նաև ամերիկացիների օրինակը, ինչը դիսոնանս է առաջ բերում: Հրեա անհատին հետապնդող այդ կաշկանդվածությունը Ռոթը փոխանցում է ֆրոյդյան Իդի տեսքով: Սահմանափակումները, որոնք ստիպված է պահել հրեան, Ռոթն արտահայտում է զսպված սեռական ցանկությունների ալլեգորիայով, որոնց

բացահայտումից սաստիկ վախենում է գրական հերոսը: Չափազանց խիստ դաստիարակություն ստացած հրեա երեխայի մեջ առաջանում է հիպերփոխհատուցման ձգտում այն ամենին, ինչն արգելված է եղել, որի հետ մեկտեղ երևան է գալիս բացահայտման վախը, վերջինի անմիջական ակնարկն է Ֆրոյդի մյուս՝ կաստրացիայի վախի տեսությունը: Ռոթի գրական հերոսները ապրում են երկակի կյանքով՝ բանական և ենթագիտակցական-սեռական, որոնք հակադրվում են միմյանց: Դրանք այնքան տարբեր են իրարից, որ, օրինակ, Ալեքս Պորտնոյը մտածում է, որ իրեն աշխատանքի և ուսման մեջ տեսնողը երբեք չէր կռահի, որ ինքը սեռական մոլագար է: Միաժամանակ նա սարսափում է, որ ինչ-որ մեկը կարող է դա կռահել (արգելում է իր սիրուհուն՝ Մերի-Ջեյնին, զանգել իրեն աշխատանքի ժամանակ, որպեսզի իր աշխատասենյակ մտնող մարդիկ չբացահայտեն նրանց կապի սեռական, անգամ այլասեռված, բնույթը): Ռոթի գործերում ենթագիտակցական ցանկությունների ընդունված այլաբանություն է նաև սնունդը: Եբրայական խիստ կանոնները տարածվում են նաև սննդակարգի վրա⁶: Ռոթի գրական հերոսները հաճախ են դիմում սննդին՝ որպես կապանքներից ազատվելու, ապստամբության միջոց, օրինակ՝ «Վրդովմունք» վիպակի գլխավոր հերոս Մարքուսը հուսահատորեն խուսափում է նշել, որ իր հայրը *քոշեր* մսավաճառ է. սննդի բնույթը, այստեղ՝ *քոշեր* լինելը, խորհրդանշում է ազգությունը, *քոշերը* հանդես է գալիս որպես հրեայի «հոմանիշ»: Կամ Ալեքս Պորտնոյը, ով անվերջ ձգտում է սնվել տնից դուրս՝ սրճարաններում, դայներներում (արագ սննդի ամերիկյան ռեստորան)՝ հակառակ մոր շատ խիստ արգելքներին: Մոր անվերջանալի սահմանափակումները նրան հասցնում են ներքոյի, դարձնում հոգեթերապևտի իդեալական այցելու, որը գրեթե իր բժշկի չափ տիրապետում է Ֆրոյդի հոգեվերլուծության տեսություններին. «Պորտնոյի ցավը ծնվում է նրա՝ բազում տաբուներով կաշկանդված ապրելուց հրաժար-

⁶ Սնունդը պետք է լինի *քոշեր*՝ եբրայերեն՝ ընդունելի, հրեական օրենքի պահանջներին հարիր, ծիսականորեն պատրաստված կամ օրինյալ, վաճառքի և պահելու պայմանները ևս պետք է համապատասխանեն որոշակի կանոնների: Օրինակ՝ հայտնի է, որ հրեաները չպետք է ուտեն խոզի կամ օմարի միս, իսկ ձուկը կարելի է ուտել միայն թեփուկով: Կամ՝ օրինակը, որի վրա շեշտադրություն է արվում «Պորտնոյի բողոքը» գրքում. չի կարելի ուտել իրար հետ մսեղեն՝ *ֆլաշդինգը* և կաթնեղեն՝ *միլխիք*, դրանց համար նախատեսված սպասքը պիտի պահվի առանձին: Չի կարելի մսեղենի համար նախատեսված սպասքից կաթնեղեն ուտել և հակառակը: Այս կանոններին չհամապատասխանող ուտելիքը հրեաներն անվանում են՝ *խազըրա*՝ պիղծ:

վելու ցանկությունից»⁷, -գրում է նրա կերպարի մասին Ջ. Բերթենսը. հասկանալի է, որ խնդիրը միայն ուտելիքների տաքուները չեն: Այս ապստամբությունն իր ամենասուր բնույթը ստանում է «Ամերիկյան հովվերգության» գլխավոր հերոսուհու՝ Մերիի «գործելաոճում»: Եթե Ալեքս Պորտնոյի ապստամբությունն ընթանում է հերոսի հոգեկան աշխարհում և սեռական կյանքում, Մերիի ապստամբությունը շատ ավելի զգալի մասշտաբների է հասնում՝ սոցիալ-քաղաքական և կրոնական-առողջական: Հերոսուհու «անսահման» բնույթը շատ թափանցիկ է ցուցադրվում սննդի հարցում ծայրահեղական լինելու մեջ. նա դեռահաս տարիքում համարյա գրոտեսկի հասնող շատակեր է, հասուն տարիքում հասնում է հակառակ ծայրահեղության՝ ծոմի միջոցով դանդաղ սովամահության է հասցնում իրեն: Դա արտահայտվում է նաև ֆիզիկական մակարդակում. սկզբում նա շատ գեր է, հետո՝ հիվանդագին նիհար: Այդպես նա նաև իրեն տարանջատում է սեփական բարեկազմ ու գեղեցիկ ծնողներից: Սննդի նկատմամբ նման վերաբերմունքը խորհրդանշում է «մայրական կրծքից» կտրվելը՝ ֆրոյդյան անջատումը (*սեպարացիան*):

Իր գրական հերոսների երկատված բնավորությունն արտահայտելու համար Ֆ. Ռոթը դիմում է դասական միջոցի՝ նույն գրքի մեջ բերելով երկու տարբեր կերպարների, որոնք հակակշիռ են իրար և առանձին-առանձին արտացոլում են գլխավոր հերոսի բնավորության գծերից մեկը: Այսպիսիք են օրինակ Քեյ Քեմբլի և Մերի-Ջեյնի կերպարները «Պորտնոյի բողոքը» գրքում. առաջինը մարմնավորում է Ալեքսի ինտելեկտուալ կողմը, երկրորդը՝ սեռական: «Ցանկության մասնագետը» գրքում այս միջոցը օգտագործվում է երկու անգամ՝ կանանց երկու զույգի միջոցով. առաջին զույգը Բիրգիթան և Էլիզաբեթն են՝ ուսանողուհիներ, որոնց հետ գրքի գլխավոր հերոսը՝ Դևիդ Քեմփեշը, ապրում է հանրակացարանում և գտնվում է սեռական հարաբերությունների մեջ: Համարձակ Բիրգիթան խորհրդանշում է Իդը, երկրորդ Էլիզաբեթը՝ Գերեսը: Միասին ապրելու տարիներին երեքն էլ ձևացնում են, որ գոհ են իրենց կարգավիճակից, սակայն որոշ ժամանակ հետո Էլիզաբեթը նամակ է գրում Դևիդին, որտեղ խոստովանում է, որ սիրահարված էր վերջինիս, և իրենց հարաբերությունների ազատ, «եռանկյունաձև» բնույթը ցա-

⁷ Bertens J. W. "The Measured Self vs. The Unsatiated Self: Notes on Philip Roth, // From Cooper to Philip Roth: Essays on American Literature, edited by J. Baker and D.R.M. Wilkinson with a foreword by J. Gerritsen, Presented to J. G. Riewald on the occasion of his seventieth birthday, editions «Rodopi N. V.», Amsterdam, 1980, p. 95 (թարգմանությունն անգլերենից մերն է)

վեցնում էր իրեն: Ինքը՝ Քեփեշը, երկակի զգացողություն ունի այս նամակից հետո. նա միաժամանակ երագում է լինել Բիրգիթայի նման՝ սահմաններ չճանաչող, միայն իր հաճույքի հետևից գնացող, բայց իր մեջ անդառնալիորեն կրում է նաև Էլիզաբեթին⁸: Հաջորդ զույգը Դևիդ Քեփեշի երկու կանայք են: Առաջին կինը՝ Էլենը, խորհրդանշում է Իդը՝ ենթագիտակցությունը, երկրորդը՝ Քլերը, Գերեսի մարմնավորումն է: Նրանց բնույթը հեղինակը ցույց է տալիս ոչ միայն բնավորության, այլ նաև կենցաղի միջոցով. Էլենը ուշ է քնում և ուշ արթնանում, թափափված է, չի հետևում տան կարգուկանոնին, չի աշխատում, միակ բանը, որ նրա մոտ կրոնի աստիճանի կարգավորված է, սեփական արտաքինի նկատմամբ խնամքն է (հետաքրքրական է, որ այս կերպարի նախատիպը Ֆիլիպ Ռոթի առաջին կինն է՝ Մարգարեթ Մարթինսոնը): Քլերը վաղ է քնում և արթնանում, շատ կազմակերպված է, բնակարանում միշտ պահում է կարգուկանոն և մաքրություն, ուսուցչուհի է, որի հետևողական բնավորությունը ցույց տալու համար հեղինակը նկարագրում է, թե ինչպես է նա մշտապես սառնարանի դռանն ամրացնում օրվա անելիքների մասին կաշուն թղթեր: Քեփեշի կյանքը չափազանց լարված է ընթանում առաջին կնոջ հետ և չափազանց հանգիստ՝ երկրորդի հետ: Արդյունքում նա չի կարողանում մնալ ո՛չ առաջինի, ո՛չ երկրորդի հետ, քանի որ կանայք մարմնավորում են նրա երկու՝ իրար հակառակվող էությունները. նա կրում է երկու կողմն էլ, մինչդեռ կանայք ունեն միայն մեկը: Էլենին ձգում է նրա Իդը, վանում՝ Գերեսը, Քլերի դեպքում հակառակն է. ձգում է Գերեսը, վանում է Իդը: Հարաբերությունների նույն համակարգն է առկա նաև «Պորտնոյի բողոքում» Ալեքսանդրի, Քեյ Քեմբլի և Մերի-Ջեյնի միջև⁹:

Գերեսի և Իդի պայքարը Նաթան Ֆուքերմանի և Դևիդ Քեփեշի կերպարներում: Ֆիլիպ Ռոթի գրական ժառանգության հիմնական մասը փուլային բնույթ ունի, խմբավորված է ըստ որոշակի թեմատիկայի, օրինակ՝ Ամերիկյան եռագրություն՝ կազմված երեք վեպից՝ «Ամերիկյան հովվերգություն» (1997թ.), «Իմ ամուսինը կոմունիստ է» (1998թ.), «Մարդկային խարա-

⁸ See Bertens J. W. "The Measured Self vs. The Unsatiated Self: Notes on Philip Roth, // From Cooper to Philip Roth: Essays on American Literature, edited by J. Baker and D.R.M. Wilkinson with a foreword by J. Gerritsen, Presented to J. G. Riewald on the occasion of his seventieth birthday, editions «Rodopi N. V.», Amsterdam, 1980, p. 101

⁹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս՝ Ադամյան Լ., Զիգմունդ Ֆրոյդի «Ես»-ի և «Իդ»-ի կոնցեպցիան և դրանց հակադրությունը Ֆիլիպ Ռոթի «Պորտնոյի բողոքը» վեպում, Երևան, 2020, ԵՊՀ, Օտար լեզուները բարձրագույն դպրոցում գիտական հանդես, համար 2(29), էջ 105-120:

նը» (2000թ.), կամ Նեմեսիսյան վեպերը՝ չորս մասից՝ «Սովորական մարդ» (2006թ.), «Վրդովմունք» (2008թ.), «Ստորացում» (2009թ.), «Նեմեսիս» (2010թ.): Այս շարքերը միավորված են ընդհանուր թեմատիկայով: Գրականագետները Ռոթի ստեղծագործության մեջ ևս երկու շարք են առանձնացնում, որոնց միավորում են շարքի յուրաքանչյուր ստեղծագործության գլխավոր հերոսների տարանցիկ կերպարները: Առանձնացվում է երկու շարք՝ ըստ գլխավոր տարանցիկ կերպարի անվան.

Ա) Ցուքերմանյան շարք՝ Նաթան Ցուքերմանի անունով. ընդգրկում է «Գրական սևագործը» (1979թ.), «Ցուքերմանը ազատագրված» (1981թ.), «Անատոմիայի դասը» (1983թ.), «Օրգիա Պրահայում» (1985թ.) գործերը, որոնք իրենց հերթին մտնում են «Ցուքերմանը շղթայված» (1979-1985թթ.) շարքի մեջ, այնուհետև «Ապրել բոլորին հակառակվելով» (անգլ. *The Counterlife*, 1986թ.) և «Ուրվականը հեռանում է» (2007թ.) վեպերը, որոնց գումարվում են «Ամերիկյան եռագրության» մեջ մտնող վեպերը, քանի որ դրանց թեմատիկան տարբեր է, բայց նարատորը նորից Նաթան Ցուքերմանն է:

Բ) Քեփեշյան շարք՝ Դևիդ Քեփեշի անունով. ընդգրկում է երեք ստեղծագործություն՝ «Կուրծքը» (1972թ.) վիպակը, «Ցանկության մասնագետը» (1977թ.) և «Մեռնող կենդանին» (2001թ.) վեպերը:

Չնայած նրան, որ Նաթան Ցուքերմանը և Դևիդ Քեփեշը երբեք չեն հանդիպում միմյանց Ռոթի ստեղծագործական աշխարհում, նրանց կերպարներն այնպես են կառուցված, որ տրամաբանական զուգահեռ է ստեղծվում երկուսի միջև: Նրանցից յուրաքանչյուրը երևան է հանում Գերեսի և Իդի պայքարում առաջինի կամ երկրորդի հաղթանակը և այն ընթացքը, որով կատարվում է դա: Ցուքերմանի կերպարի զարգացումը տանում է դեպի Գերեսի և գիտակցության հաղթանակ, Քեփեշինը՝ Իդի և ենթագիտակցության: Ընթերցողին դա փոխանցելու համար Ռոթն օգտագործել է ֆրոյդյան սուբլիմացիայի տեսությունը. և՛ Նաթանը, և՛ Դևիդը գրողներ են, ովքեր պետք է իրենց սեռական էներգիան փոխակերպեն ստեղծագործության. տվյալ դեպքում որպես ինտելեկտուալ-գիտակցական կողմ ընկալվում է գրականությունը (ընդ որում, հենց սեփական ստեղծագործությունը, որովհետև Դևիդ Քեփեշը համալսարանում գրականության դասախոս է, բայց Ռոթը դա չի համարում նրա Գերեսի հաղթանակ):

Նաթան Ցուքերմանը կարողանում է հաղթահարել իր ենթագիտակցական-սեռական կողմը և հաջողել որպես գրող: Իդից ազատման մասին են



վկայում վերնագրերը, որոնք տվել է Ռոթը այս կերպարի համար կարևոր վեպերին՝ առաջին չորս վեպի անվանումը որպես շարք՝ «Ցուքերմանը շղթայված», և շարքի վեպերից մեկը՝ «Ցուքերմանն ազատագրված»։ Ստեղծագործական և սեռական կողմերի պայքարում առաջինի հաղթանակի այլաբանությունն է նաև Նաթանի մոտ շագանակագեղծի քաղցկեղը, որով վերջինս հիվանդանում է որպես գրող վերջնականապես ձևավորվելուց հետո։ Նա հաղթահարում է քաղցկեղը՝ դրանից հետո դառնալով ներքինի (ամորձատվում է ու սեռական կարողություններից զրկվում)։ Սա շատ բացահայտ ակնարկ է հեղինակի՝ Ռոթի կողմից։

Ցուքերմանի հակակշիռ զուգահեռն է Քեփեշը. երկու կերպարներին էլ բնորոշ է ցանկասիրությունը (ինչպես Ռոթի գրական գործերի գլխավոր հերոսների մեծ մասին)։ Քեփեշը Ցուքերմանի այթեր էգոն է՝ ենթագիտակցական կողմը, որին պարտվում է Գերեսը։ Իր մասին առաջին ստեղծագործությունում նա վերածվում է կանացի կրծքի. վիպակը Ֆրանց Կաֆկայի «Կերպարանափոխության» ծաղրանմանությունն է։ Երկրորդ վեպում («Յանկուքյան մասնագետը») Ռոթը բառախաղով է արտահայտում իր հեգնանքը հենց սկզբից՝ վերնագրից. գրականության պրոֆեսոր Դևիդ Քեփեշը ինքն իրեն նոր կոչում է տալիս՝ ցանկության պրոֆեսոր։ Իրար են հակադրվում գրական-ստեղծագործական և սեռական կողմերը, և արդեն հայտնի է, թե որ կողմն է հաղթել Քեփեշի մոտ։ Դեպի Իդի հաղթանակ այս «երթը» եզրափակում է վերջին՝ երրորդ վեպը՝ «Մահացող կենդանին»։ Վերնագիրը վերցված է Ուիլիամ Եյթսի «Նավարկություն Բյուզանդիա» ժողովածուի համանուն բանաստեղծությունից, որը վեպի վերջում հիշում է գլխավոր հերոսը։ Պատահական չէ, որ Եյթսի մեկ այլ բանաստեղծություն՝ «Լեդան և Կարապը», արտասանում է Ալեքսանդրը («Պորտնոյի բողոքը») Մերի-Ջեյնի համար։ Նրանք զույգ են, որոնց կապում է միայն մարմնականը։ Վերնագիրը կարող է հավասարապես վերաբերել գրքի երկու հերոսներին էլ՝ պատկառելի տարիքում իր նախկին ուսանողուհուն սիրահարված Դևիդին, ով տանջվում է սեռական մոլեգին ցանկությունից, որն իրեն «կենդանի» է դարձրել, և գեղեցիկ, բայց մարմնական գեղեցկությունից բացի ոչինչ չունեցող պարզամիտ Կոնսուելոյին, ով մահանում է կրծքի քաղցկեղից։ Վեպում զուգահեռ հիմնական թեմաներից է 1960-ականների սեռական հեղափոխությունը, դրա բերած կանանց ազատականացումը (էմանսիպացիա), որն ակնարկվում է գրքի յուրաքանչյուր կնոջ կերպարում, և ինչ-որ տեղ զգացմունքների արժեզրկումը, որ առաջանում է սահմանափակումների վերացումից հետո։

Ամբողջ եռագրության մեջ շեշտվում է Դևիդի համար Ֆրանց Կաֆկայի կարևորությունը: «Կուրծքը» վիպակը, որտեղ ընթերցողը առաջին անգամ ծանոթանում է Դևիդի կերպարին, ցույց է տալիս նրա՝ իրական աշխարհից կտրվելը և գոյությունը կաֆկայական աշխարհում շարունակելը: Դևիդը՝ որպես «իդեալ-հեղինակ», ընտրում է Կաֆկային, հիվանդագին ձևով տարվում է նրանով, տարրալուծվում նրա կերպարի մեջ, սակայն «Ցանկության մասնագետում» պարզորոշ երևում է, թե ինչպես է Քեփեշը գիտակցում, որ Կաֆկան, ի տարբերություն իրեն, տուրք չի տվել սեռականին և կարողացել է հասնել ստեղծագործական բարձունքների: Քեփեշը փորձում է անտեսել դա և ինքնախաբեության ցուցադրությունն է վեպում այն դրվագը, երբ նա Պրահայում փնտրում է Կաֆկային սպասարկած մարմնավաճառին, ու երբ նրան ներկայացնում են մի կնոջ, որը, կասկածելի է, իրո՞ք այդ կինն էր, համառորեն փորձում է մանրամասներ կորզել Կաֆկայի սեռական կյանքի մասին՝ «սեռականացնել» Կաֆկային: Հատկանշական է, որ դրանից հետո նա այցելում է Կաֆկայի գերեզման և տեսնելով, որ այն ամենախնամվածն է, մտածում. «Բոլորի միջից ամենաշատ ժառանգներն ունի այս ամուրին, որը երեխա չի ունեցել»¹⁰:

Էդիպյան և Էլեկտրայի բարդությունների թեման Ֆիլիպ Ռոթի ստեղծագործություններում: Հոգեթերապիայի այն տեսությունը, որից ամենաշատն է օգտվել իր ստեղծագործություններում Ռոթը, Էդիպյան և Էլեկտրայի բարդությունների ըմբռնումն է: Ինցեստի մասին ակնարկները, հաճախ բացահայտ խոսակցությունները, նրա գրական ժառանգության մեջ ուրույն տեղ ունեն: Ինցեստը, թերևս, այլաբանություն է ծառայում՝ ցույց տալու, թե որքան «հեռուն» է գնում հրեա ծնողի՝ երեխայի կյանք մտնելու, այն անվերջ կառավարելու և կազմակերպելու բնավորությունը: Ծնողի և երեխայի կյանքերը վտանգավոր կերպով մոտենում են իրար. ծնողը խախտում է զավակի կենսական ասպարեզի սահմանները, միջամտում ծնող-երեխա տարանջատումից հետո իրեն չվերաբերող հարցերին: Հրեա ծնողի այս հիվանդագին վերահսկող բնավորությունը Ռոթը իրեն բնորոշ հանդուգն հեգնանքով համեմատում է ինցեստի հետ:

Այս տեսությունը կարելի է նկատել «Պորտնոյի բողոքը» վեպում: Խոսելով ծնողների, հատկապես մոր մասին՝ Ալեքսը նկատում է՝ հրեա ծնողների

¹⁰ Roth P., Professor of Desire. New York, Farrar, «Straus and Giroux, 1977, p. 263 (թարգմանությունն անգլերենից մերն է)

համար կարևոր չէ, թե տղան քանի տարեկան է՝ երե՞ք, տասներե՞ք, թե՞ երեսուներեք, միևնույն է, նա ծծկեր երեխա է¹¹: Պատահական չէ հենց համեմատությունը. մայրական կրծքից սնվող երեխայի և ծնողի միջև տեղի չի ունեցել տարանջատում: Այնուհետև բերվում են հերոսի համար զարմանալի և անընդունելի մանրամասներ այն մասին, թե ինչպես են իրեն՝ 33 տարեկան տղամարդուն, ծնողները հիշեցնում ամենատարրական բաներ («Չմոռանա՛ս այսինչ մարդուն զանգել», «Չմոռանա՛ս ճաշել աշխատանքի գնալուց առաջ»): Նմանատիպ հետաքրքիր մի դրվագ կա հայրապետական մեկ այլ ազգի՝ իտալացիների կյանքից ժամանակակից իտալուիի գրող Լուչիանա Լիտիցետոյի «Միայնակ՝ ինչպես նեխուրի ցողունը» գրքում. «Ես 37 տարեկան եմ: Մայրս մինչև հիմա փողոցում ծանոթ մարդ տեսնելիս հաջողացնում է թևքիցս քաշել ու փսփսալ ականջիս՝ կբարևես»¹²:

«Պորտնոյի բողոքը» վեպում մշտապես շեշտվում է որդու ազդվածությունը մորից, որի վերահսկող, կոշտ բնավորությունը իրեն մոռանալ չի տալիս անգամ տարիներ անց: Վեպի առաջին գլուխը վերնագրված է «Իմ կյանքի ամենաանմոռանալի կերպարը» (նկատի ունի մորը): Մայրը ձգտում է՝ որքան հնարավոր է մոտ պահել որդուն, այնքան, որ դա հասնում է մարմինների միաձուլման և գրոտեսկային կերպով ներկայացվում ինցեստուալ թեմայով, որից անվերջ տանջվում է Ալեքսը: Այն, որ մայրը իրեն հանգիստ չի թողնում, համեմատվում է կնոջ՝ տղամարդուն իրեն մոռանալ չթույլատրելու հետ: Օրինակ՝ Ալեքսանդրը պատմում է հոգեթերապևտին, որ իրեն չի հաջողվի ընտանիք կազմել, քանի որ մայրն իր հետ հեռախոսով խոսելիս հարցնում է. «Ինչպե՞ս է իմ սիրեցյալը» (բնագրում. «How's my *lover*», ընգծումը իմն է՝ Լ. Ա., անգլ. *lover* -սիրելի կին կամ տղամարդ):

Ռոթի մյուս հայտնի վեպում՝ «Ամերիկյան հովվերգության» մեջ, նկատվում է էլեկտրայի բարդույթը: Ի տարբերություն Ալեքս Պորտնոյի, ով խոսում է իր հոգեթերապևտի հետ ու խոստովանում ենթագիտակցաբար մորը ձգտելու մասին, Մերիի և հոր՝ Սիմորի միջև եղած ենթագիտակցական ինցեստուալ կապը միայն ակնարկվում է: Բացի դրանից՝ «Պորտնոյի բողոքում» իրադարձությունները նկարագրվում են Ալեքսանդրի տեսանկյունից, որը խոստովանում է, իսկ «Ամերիկյան հովվերգությունում»՝ Սիմորի տեսան-

¹¹ Ռոթ Ֆ., Պորտնոյի Ցավը, Երևան, «Անտարես», 2018, էջ 53 (թարգմանությունն անգլերենից՝ Զավեն Բոյաջյանի):

¹² Литтицетто Л., *Одна как стебель сельдерея*, Москва, «РИПОЛ КЛАССИК», 2008, стр. 113 (թարգմանությունը ռուսերենից մերն է):

կյունից, որը, միանշանակ, պատասխանները թաքցնում է: Ըստ վեպի տրամաբանության՝ ինքեստուալ նկրտումները ավելի ուժեղ են դրսևորվում Մերիի կողմից, իսկ Սիմորին ամբողջ ընթացքում մնում է միայն տանջվել կասկածներից՝ արդյոք այն, ինչ կատարվել է Մերիի հետ (կակազը, քաղաքական ահաբեկիչ դառնալը, տնից փախչելը, ավելորդ, այնուհետև թերի քաշ ունենալը, ջայնիզմ կրոնին հետևելը և այլն) արդյունք են իր մեկ համբույրի՞, երբ նա տեղի է տալիս դստեր խնդրանքին՝ համբուրելու նրան՝ «ինչպես մայրիկին է համբուրում»: Համբույրի մասին հիշողությունները հետապնդում են Լևովին ամբողջ վեպի ընթացքում: Սակայն կակազը աղջկա մոտ սկսվել էր դեռ դրանից առաջ: Ինչպես վերը նշվեց, Մերիին տանում են հոգեթերապևտի մոտ, որը եզրակացնում է՝ կակազը առանձնահատուկ երևալու միջոց է: Հետագայում կակազելուն ավելանում են այլ խնդիրներ: Դեռահասության շրջանում Մերին զգալի քաշ է հավաքում և դադարում իրեն հետևել: Արագ սնունդ է ուտում հիմնականում դրսում, տան սննդից հրաժարումը նմանվում է մայրական կրծքից հրաժարվելուն: Ավելի հասուն տարիքում, երբ հայրը վերջին անգամ է տեսնում նրան, աղջիկը հասել էր հակառակ ծայրահեղության՝ սարսափելիորեն նիհարել էր: Ամբողջ վեպում անընդհատ շեշտվում է, թե որքան գեղեցիկ են Մերիի ծնողները. մայրը գեղեցկության մրցույթի հաղթող էր՝ «Միս Նյու Ջերսի», հայրը արտաքնապես նման էր Ջոն Քենեդուն, ոչ թե եբրայական, այլ վիկինգի, սկանդինավցու արտաքին ուներ, ինչի համար ստացել էր Շվեդ մականունը: Թվում է՝ Մերին դուրս է գեղեցկության այդ շրջանակից: Միայն նրա ու հոր վերջին հանդիպումը նկարագրելիս հեղինակն ընթերցողի ուշադրությունը հրավիրում է աղջկա՝ հոր արտաքինից զմայլվելու փաստի վրա, հետո բազմաթիվ անգամներ ակնարկում նրանց նմանությունն արտաքնապես: Մերին հիվանդագին նիհար է, փնթի, ցնցոտիներով, սակայն իրականում արտաքնապես հոր կին տեսակն է, որը ակնարկվում է Սիմորի մտքերի միջոցով. «նույնքան բարձրահասակ ու թիկնեղ, ինչպես ես», «մազերը, որ առաջ ճիշտ իմ՝ ոսկեգույն-խարտյաշ գույնն ունեին», «նիհար, դալուկ դեմքի վրայից ինձ էին նայում իմ կապույտ աչքերը» և այլն: Մերին, որ ինքնաոչնչացման անհաղթահարելի ձգտում ունի, ոչնչացնում է նաև իր սեփական արտաքինը, գեղեցկությունը: Նա ենթագիտակցությամբ դիտմամբ ձգտում է տգեղացնել ինքն իրեն՝ չնմանվելու գեղեցիկ ծնողներին՝ նրանց հետ ընդհանուր ոչինչ չունենալու և ինքն իրեն ցույց տալու համար, որ արտաքինով չի կարող մրցել գեղեցկուհի, «Միս Նյու Ջեր-

սի» մրցույթի հաղթող մոր հետ, դրանով է պատճառաբանված հոր՝ իրեն «ինչպես մայրիկին» չհամբուրելու փաստը:

Եվս մեկ ստեղծագործության մեջ («Իմ ամուսինը կոմունիստ է») այս երևույթը ստանում է անսպասելի կողմեր. ենթագիտակցորեն ինքեստուալ կապվածությունն ունեն մայրն ու դուստրը՝ Եվա Ֆրեյմը և Սիլֆիդը: Եվայի երկրորդ ամուսնու՝ Այրայի համար գլխավոր մրցակից է ոչ թե կնոջ նախկին ամուսիններից մեկը, այլ դուստրը, որը հիվանդագին ձևով կառավարում է մորը, ամեն կերպ ձգտում ստանալ նրա ուշադրությունը, խանդում. այս ձգտումները ծայրահեղության են հասնում այն դրվագում, երբ Սիլֆիդը ստիպում է հղի մորը ազատվել Այրայի երեխայից: Եվան չի նկատում դստեր մանիպուլացիաները, եսասեր, ցինիկ բնավորությունը և իդեալականացնում է նրան: Սա ընթերցողի ծիծաղն է առաջացնում, քանի որ ընթերցողը նկատում է այդ ամենը, իսկ Եվայի կուրությունը հասցված է գրոտեսկի: Այս կանանց միջև ենթագիտակցական-ինքեստուալ կապվածության մասին եզրակացությունների մասին կասկածները Ռոթը վերջնականապես ջնջում է այն դրվագում, երբ Այրան տեսնում է, թե ինչպես է Սիլֆիդը պառկած մոր վրա սեռական հարաբերությունների նմանվող դիրքով: Նույնպիսի դրվագ կա Էլֆրիդա Էլինեկի «Դաշնակահարուհին» գրքում, որտեղ բացահայտ է խոսվում մոր՝ աղջկա կյանք մտնելու ինքեստուալ ծայրահեղության մասին: Այնտեղ գերիշխող է մոր կերպարը, որը վերահսկում է դստեր ռոմանտիկ և սեռական կյանքը, ջանում հեռու պահել նրան բոլոր տղամարդկանցից, ինչի կենցաղային դրսևորումն է դստեր՝ Էրիկայի զգեստապահարանի «վերահսկումը», որտեղ ոչ մի իր չափտի հայտնվի առանց մոր թույլտվության: Էրիկայի «ապստամբությունը» դրսևորվում է գաղտնի կերպով զգեստներ գնելով, որոնք մայրը հետո չի թույլատրում կրել: Արդյունքում Էրիկան ունենում է լիքը զգեստապահարան, որտեղից գրեթե ոչինչ չի կրում: Այս հերոսուհին իր ճակատագրով շատ զուգահեռներ ունի Ալեքսանդր Պորտնոյի հետ: Նրա սեռական կյանքն էլ է չստացված, տարօրինակ, այլասերված մոր անվերջ հսկողության պատճառով: Իսկ «Իմ ամուսինը կոմունիստ է» վեպում մայր-դուստր զույգից գերիշխող է դուստրը: Հեղինակը դա ակնարկում է նաև նրանց արտաքինների համեմատությամբ. դուստրը գեր է, խոշորամարմին, մայրը՝ նուրբ ու բարեկազմ: Բացի դրանից՝ նշելով, որ նա քնար է նվագում և կրում Սիլֆիդ անունը՝ Ռոթը աղջկան հեգնորեն համեմատում է գիշատիչ

*Սիրենի*¹³ հետ: Հատկանշական է, որ ի տարբերություն մյուս գրքերի հերոսների՝ այստեղ հենց դուստրն է դեմ մորից տարանջատվելուն (սեպարացիային), ոչ թե հակառակը, ինչպես Պորտնոյի և Մերիի դեպքում: Դրա այլաբերությունն այն է, որ վաղուց չափահաս դարձած Սիլֆիդը մոր տանն է ապրում և կտրականապես հրաժարվում է տեղափոխվելուց: Այրայի քայլը դեպի նրա՝ սեփական բնակարան տեղափոխվելը աղջկա մեջ գրոտեսկի հասցված ագրեսիայի է հանդիպում: Այս դեպքում երեխան է մտնում ծնողի անձնական տիրույթ՝ սեռական բռնություն հիշեցնելով:

Եզրակացություններ: Ինչպես շատ այլ հեղինակների, այնպես էլ Ֆիլիպ Ռոթի գրական ժառանգությունը մեծապես կրում է Զիգմունդ Ֆրոյդի գիտական-հոգեբանական տեսությունների ազդեցությունը, ընդ որում հրեա հեղինակ Ռոթի ստեղծագործությունն ազդված է հրեաներից՝ Զ. Ֆրոյդ, Ս. Բեյլլու, Ֆ. Կաֆկա: Սակայն Ռոթը ոչ թե կոպորեն հետևում է Ֆրոյդի առաջարկած դրույթներին, այլ թերահավատորեն է մոտենում դրանց: Հոգեթերապևտի երբեմնի այցելու Ռոթն արտահայտվել է այդ թերապիայի ոչ արդյունավետ և միակողմանի լինելու դեմ: Այդ միտումը նկատվում է հեղինակի տարբեր ստեղծագործություններում: Նա իր ամենասիրելի արտահայտչամիջոցով՝ հեգնանքով է վերաբերվում ֆրոյդյան տեսության դրույթներին, ինչպես նաև ամերիկացիների շրջանում դրանց և հոգեբան-հոգեթերապևտի այցելելու նորաձև լինելուն:

Ռոթը չի հավատում Ֆրոյդի տեսությանը, բայց մեծապես օգտագործում է այն իր գրքերում: Դա վերաբերում է և՛ կառուցվածքաբանական կողմին, երբ որոշ ստեղծագործություններ գրված են հոգեթերապիայի սեանսի ստենոգրաֆիայի տեսքով («Խաբեություն», «Պորտնոյի բողոքը» վեպերը, «Վրդովմունք» վիպակը գրված է *գիպակցության հոսքի* գրական ձևին նմանվող տեքստով, որը նույնպես առաջացել է ֆրոյդյան տեսություններից), և թեմատիկ: Ֆիլիպ Ռոթի գրական գործերում շատ են շոշափվում խիստ դաստիարակություն ստացած հրեա երեխաների կողմից դրսևորվող հիպերփոխհատուցումը, ծնողների՝ երեխաների կյանքին ավելորդ կերպով խառնվելու բնավորությունը, երեխաներից տարանջատումն ամեն կերպով խոչընդոտե-

¹³ Սիրենները (հին հուն.՝ Σειρήνες), ոգեղեն էակներ հին հունական դիցաբանության մեջ: Համարվել են մուսաներից մեկի և Աքելոսի (հին հուն.՝ Ἀχελῷος - նույնանուն գետիոգի) կիսաթռչնակերպ դուստրերը, որոնք հորից, իբր, ժառանգել են վայրի տարերքը, իսկ մորից՝ աստվածային ծայրը: Իրենց երգի ծայրով նրանք թմրեցնում էին ճամփորդներին, իսկ հետո բաժանում նրանց մասերի և ուտում:

լը, որը հեղինակը համեմատում է ինքեստի հետ, էդիպյան և Էլեկտրայի բարդույթների մասին թեմաները: Մի քանի վեպերի կենտրոնական թեմաներից է մարդու մեջ Գերեսի և Իդի պայքարը, որտեղ առաջինը գիտակցությունն է, ընտանիքի և եբրայական համայնքի կողմից դաստիարակված արժեքները, երկրորդը՝ ենթագիտակցությունը, ազատության ձգտումը, ապստամբությունը հրամցված բոլոր կապանքների և արգելքների դեմ, որոնցից ազատ են ամերիկացիները, վերջինների շրջապատում են հիմնականում ապրում Ռոթի ստեղծագործությունների հերոսները՝ ներգաղթյալ հրեաները: Միևնույն հերոսի մեջ այդ երկու կողմերի առկայությամբ պայմանավորված՝ Ռոթի հետազոտողներից մեկը՝ Զ. Բերթենսը, առանձնացրել է *սահմանափակ և անսահման* էություններ: Առաջինը սահմանափակվում է Գերեսի՝ գիտակցության կողմից, անսահման էությունը թույլ է տալիս այն ամենը, ինչ կա ենթագիտակցության մեջ, այսինքն՝ ցանկացած ազատություն (ձգտումը դեպի ազատություն Ֆ. Ռոթի հերոսների մոտ հիմնականում արտահայտվում է սեռական և սննդային ազատության տեսքով, ինչպես Մերի Լևովի և Ալեքսանդր Պորտնոյի դեպքում):

Միևնույն հերոսի մեջ Գերեսի և Իդի համատեղումը հանգեցնում է կերպարի երկատվածության: Դրանց պայքարը պառակտում է հերոսին, ինչպես, օրինակ, «Պորտնոյի բողոքում», դառնում տարբեր թեմատիկ շարքերի ուղեկից, օրինակ՝ Յուքերմանյան և Քեփեշյան շարքերի վեպերում: Նաթան Յուքերմանը և Դևիդ Քեփեշը անցնում են Գերեսի և Իդի պայքարի ճանապարհը, առաջինի մոտ հաղթանակում է Գերեսը, երկրորդի մոտ՝ Իդը: Հատկանշական է, որ Ռոթը այս երկու կերպարների զուգահեռ համեմատության միջոցով ցույց է տալիս սեռականի և ստեղծագործականի հակադրությունը՝ օգտագործելով ֆրոյդյան այն դրույթը, որ ստեղծագործությունը սեռական էներգիայի սուբլիմացիա է: Դրա ամենացայտուն օրինակը գրողը տվել է «Ցանկության մասնագետը» վեպում Ֆրանց Կաֆկայի կերպարի միջոցով, ով չունի սեռական կողմ, միայն կենտրոնացված ստեղծագործական: Քեփեշը տրվում է էրոտիկ կողմին և չի կայանում որպես գրող, Նաթանը կարողանում է հաղթահարել սեռականը և կայանալ որպես գրող, դրա սիմվոլիկ արտահայտությունն է շագանակագեղձի քաղցկեղը, որով նա հիվանդանում է, երբ ձեռք է բերում որպես գրող իր վերջնական դիմագիծը:

Այսպիսով, Զիգմունդ Ֆրոյդի հոգեբանական տեսությունները, հատկապես հոգեվերլուծության տեսությունը, հզորագույն գրական գործիք են հան-

դիսացել Ֆիլիպ Ռոթի համար, որոնցից նա օգտվել է իր գրեթե բոլոր ստեղծագործություններում:

Օգտագործված գրականության ցանկ

I ՏԵՍԱԿԱՆ

1. Bertens J. W. *“The Measured Self vs. The Unsatiated Self:” Notes on Philip Roth, // From Cooper to Philip Roth: Essays on American Literature*, edited by J. Baker and D.R.M. Wilkinson with a foreword by J. Gerritsen, Presented to J. G. Riewald on the occasion of his seventieth birthday, editions «Rodopi N. V.», Amsterdam, 1980

2. Freud S., *A General Introduction to Psychoanalysis*, «Wordsworth» Classics of World Literature, London, 2012

3. *Conversations with Philip Roth*, ed. Scarles J. G., Jackson: «University Press of Mississippi», 1992

II ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ

4. Roth P., *Sabbath’s Theater*, New York: «Vintage», 1996

5. Roth P., *Professor of Desire*. New York, Farrar, «Straus and Giroux, 1977

6. Ռոթ Ֆ., Պորտնոյի Ֆավը, Երևան, «Անտարես», 2018

7. Литицетто Л., *Одна как стебель сельдерея*, Москва, «РИПОЛ КЛАССИК», 2008.

THE INFLUENCE OF SIGMUND FREUD’S PSYCHOANALYTIC THEORY IN THE WORKS OF PHILIP ROTH

ADAMYAN LUSINE

*Postgraduate at the Chair of Foreign Literature,
Faculty of European Languages and Communication, YSU
e-mail: lusine.adamyan@ysu.am*

This article analyzes the influence of Freud's psychoanalytical theories on the works of the modern American-Jewish writer - Philip Milton Roth. By using biographical, cultural-historical, comparative, psychological methods of literary criticism, the author shows how Roth uses Freud's theories in his works, not believing in the veracity of the latter, but taking them as a writer's “tool”. The writer

uses certain phenomena in psychoanalysis in the construction of his works, turns it into an allegory of something in the life of his literary characters: 1. The Oedipus and Electra complexes act as an allegory about the excessive “presence” of Jewish parents in the lives of their children, hyper-care, the grotesque of which borders on physical intimacy; 2. the theory of Superego and Id is presented as overcompensation in the form of increased libido of protagonists’ to the response of an overly strict upbringing: Superego is the upbringing of parents, Id is the protest before this upbringing and constant prohibitions; these two qualities are found in the psychology of one character, because of which he/she turns to live a "double" life. This creates in one person two different «selves», one of the Western literary scholars (J. Bertens) called them *Measured Self* (Superego) and *Unsatiated Self* (Id). It is also important to note that Ph. Roth uses the theory of psychoanalysis not only in a thematic plane, but also in a structural one: several of his novels and novellas are written in the form of psychotherapy sessions, for example, "Deception", "Portnoy's Complaint", and there is a similarity of the narrative with the *Stream of Consciousness* in others, for example, in the novel "Indignation".

Keywords: *S. Freud, Ph. Roth, theory of psychoanalysis, psychotherapy, irony, Super-Ego, Id, conscious, unconscious, Oedipus complex, Electra complex.*

ОТГОЛОСКИ ТЕОРИИ ПСИХОАНАЛИЗА ЗИГМУНДА ФРЕЙДА В ТВОРЧЕСТВЕ ФИЛИПА РОТА

АДАМЯН ЛУСИНЕ

*Аспирантка кафедры зарубежной литературы
факультета европейских языков и коммуникации ЕГУ
электронная почта: lusine.adamyan@ysu.am*

В данной статье анализируются влияния научных взглядов З. Фрейда на произведения современного американского писателя еврейского происхождения Филипа Милтона Рота. Используя биографические, культурно-исторические, сравнительные, психологические методы литературоведения, автор показывает, как Рот использует в своих произведениях теории Фрейда, не веря в правдивость последних, а принимая их как за писательский “инструмент”. Писатель опирается на определенные положения теории психоанализа при построении своих произведений, использует их как аллереорию тех или иных явлений в жизни героев своих книг:

1. Эдипов комплекс и комплекс Электры выступает как иносказание о чрезмерном присутствии еврейских родителей в жизни своих детей, гиперопеке, гротескность которой граничит с физической близостью; 2. теория о Сверх-Я и Оно представляется, как гиперкомпенсация в виде повышенного либидо у главных героев на ответ чрезмерно-строгого воспитания: Сверх-Я – воспитание родителей, Оно – протест перед этим воспитанием и постоянные запреты; эти два качества встречаются в психологии одного героя, из-за чего он начинает вести “двойную” жизнь. Это создает в одном человеке две стороны, которые один из западных литературоведов (Дж. Бэртенз) назвал *Ограниченная сущность* (Сверх-Я) и *Безграничная сущность* (Оно). Так же важно отметить, что Ф. Рот прибегает к теории психоанализа не только в тематическом плане, но и в структурном: несколько его романов и повестей написаны в форме записи сеанса психотерапии, к примеру, «Обман», «Жалоба Портного», а в некоторых наблюдается схожесть повествования с «*потоком сознания*», к примеру, в романе «Возмущение».

Ключевые слова: *З. Фрейд, Ф. Рот, теория психоанализа, психотерапия, ирония, Сверх-Я, Оно, сознательное, бессознательное, Эдипов комплекс, комплекс Электры*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 09.02.2022թ.:

Հոդվածը գրախոսվել է 16.02.2022թ.: